

1. Ո՞վ ենք մենք:

Եվրամիության դիտորդական առաքելությունը (EUMM) անգն է քաղաքացիական դիտորդական առաքելություն է, որը ստեղծվել է Եվրամիության (ԵՄ) կողմից 2008 թվականի սեպտեմբերի 15-ին: Մենք ավելի քան 200 դիտորդ ենք Եվրամիության տարբեր երկրներից: Մեր գլխամասային գրասենյակը գտնվում է Թբիլիսիում: Դրանից բացի, ունենք նաև երեք դաշտային գրասենյակ Մցխեթայում, Գորիում և Ջուզղիդիում: Մենք երեք մայրցամաքներում Եվրամիության գլխավորած 11 քաղաքացիական Անվտանգության և Պաշտպանության Ընդհանուր Քաղաքականության (CSDP) առաքելություններից մեկն ենք:

2. հիմքը

2008 թվականի օգոստոսի 12-ին Եվրամիության միջնորդությամբ ստորագրված վեց կետից բաղկացած համաձայնագիրը վերջ դրեց Ռուսաստանի ու Վրաստանի միջև հնգօրյա պատերազմին: 2008 թվականի սեպտեմբերի 15-ին Եվրոպական Խորհուրդը ձևավորեց քաղաքացիական դիտորդական առաքելություն՝ կողմերի միջև կնքված համաձայնագրի կատարումը վերահսկելու համար: Ընդամենը երկու շաբաթվա ընթացքում՝ մինչև հոկտեմբերի 1-ը, Եվրամիությունը հաջողությամբ կարողացավ մոբիլիզացնել ավելի քան 200 դիտորդ: Սա Եվրամիության կողմից երբևէ ձեռնարկված ամենաարագ դիտորդների մոբիլիզացիան էր:

Առաքելության հիմնական խնդիրն է նպաստել Վրաստանի և ողջ տարածաշրջանի երկարաժամկետ կայունությանը: Հակամարտության կողմերի միջև թշնամանքը կանխելու նպատակով առաքելությունը դիտարկում է, հավաքում է տեղեկատվություն, վերլուծում է այն և կազմում է զեկույց Վրաստանում հակամարտությունների հետ կապված հարցերի, միջադեպերի և զարգացումների վերաբերյալ:



3. Մեր մանդատը

Կայունացում. Մենք նպաստում ենք Վրաստանում և ողջ տարածաշրջանում կայուն և անվտանգ միջավայր ստեղծելուն: Մեր կանոնավոր 24/7 ներկայությունը Հարավային Օսեթիայի և Աբխազիայի վարչական բաժանող գծերի երկայնքով ունի զսպող ազդեցություն՝ կողմերը գիտեն, որ մենք պարեկություն ենք իրականացնում և կարող ենք կողմերի ձեռնարկած ցանկացած գործողությունների ականատեսը լինել: Մեր մշտական ներկայությունը նպաստում է տեղում իրավիճակի կայունացմանը և բարձրացնում է անվտանգության զգացումը հակամարտության կողմ չհանդիսացող բնակչության մեջ:

Բացի այդ, մենք ունենք վստահության ամրապնդման մի քանի մեխանիզմներ, որոնք հեշտացնում են երկխոսությունը և տեղեկատվության փոխանակումը հակամարտող կողմերի միջև, երբ անհրաժեշտ է վերլուծել խնդիրները կամ միջադեպերը:

Նորմալացում. Մենք նաև օգնում ենք վերականգնել այն անջերի կյանքի բնականոն դիմը, ովքեր առավել են տուժել հակամարտությունից: Մենք տեղեկություններ ենք հավաքում նրանց հիմնական իրավունքների և կարիքների մասին, ինչպիսիք են ազատ տեղաշարժը և դրա ազդեցությունը առողջության, կրթության, կենսաթոշակների, ունեցվածքի և ջրի վրա: Այնուհետև մենք այս տեղեկատվությունը փոխանցում ենք նրանց, ովքեր կարող են առաջարկել իրենց անհրաժեշտ օգնությունը:



Եվրամիության դիտորդական առաքելությունը Վրաստանում

Վստահության վերականգնում. Մենք աջակցում ենք հակամարտող կողմերի միջև վստահության ձևավորմանը և նպաստում ենք դեֆսկալացիային և կանխարգելմանը մեր շարունակական մոնիտորինգի և երկխոսության միջոցով, Եվրամիության դիտորդական առաքելության թեժ գծի և Միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի (IPRM) միջոցով: Առաքելությունն ունի նաև վստահության ամրապնդման կարողություններ, որոնք ֆինանսավորում են փոքր ծրագրեր, որոնք ուղղված են տեղական բնակչության միջև երկխոսության և փոխըմբռնման ձևավորմանը:

Եվրամիության քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության տարածում. Վերջապես, անաչառ և օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելով՝ մենք նպաստում ենք Եվրամիության և նրա անդամ երկրների արտաքին քաղաքականության իրականացմանը Վրաստանում և ողջ տարածաշրջանում: Մենք նաև նպաստում և մասնակցում ենք Ժնևի միջազգային բանակցություններին (GID):



Դիտարկում

Մենք պարեկում ենք օրը 24 ժամ, տարին 365 օր առաքելության հեշտությամբ ճանաչելի կապույտ պարեկային մեքենաներով կամ ոտքով փակ տեղանքներում:

Ացիսթայում, Գորիում և Զուգդիդիում գտնվող մեր դաշտային գրասենյակներում դիտորդները բաժանված են երեք մասնագիտացված խմբերի: Վարչական սահմանային գոտու դիտորդները դիտարկում են վարչական սահմանագիծը և հարակից տարածքները: Նրանք վերահսկում են վարչական սահմանային գծերով տեղաշարժի ազատությունը և «բորդերիզացիայի» գործողությունները՝ այնպիսի ֆիզիկական խոչընդոտների տեղադրում, ինչպիսիք են փշալարերը, շարժման դետեկտորները և դիտաշտարակները, որոնք բաժանում են երկու անջատողական շրջանները Վրաստանի մնացած տարածքից: Քաղաքացիական անվտանգության պարեկը վերահսկում է մարդու իրավունքների իրավիճակը հակամարտությունից տուժած բնակչության, հարկադիր տեղահանվածների (վերաբնակների) և նրանց բնակավայրերի շրջանում: Հաշվետու պարեկային խումբը վերահսկում է առաքելության և Վրաստանի Պաշտպանության և Ներքին Գործերի Նախարարությունների, ինչպես նաև Վրաստանի Պետական Անվտանգության Ծառայության կողմից ստորագրված համաձայնագրերի կատարման ընթացքը: Այս համաձայնագրերը հնարավորություն են տալիս դիտորդներին մուտք գործել կոնկրետ վայրեր և հետևել հատուկ ռազմական և ոստիկանական գործունեությանը:



4. Մեր գործունեությունը

Առաքելությունը նպաստում է երկարաժամկետ կայունությանը ինչպես Վրաստանում, այնպես էլ հարևան տարածաշրջաններում՝ վերահսկելով վարչական բաժանող գծերը, իրականացնելով վստահության ամրապնդման միջոցառումներ և տեղեկատվության անաչառ մշակելով:



Վստահության ձևավորում

Էրզնեթի միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմը

Էրզնեթի միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի հանդիպումների ֆասիլիտացիան և մեդերացիան իրականացվում է Եվրամիության դիտորդական առաքելության (EUMM) և Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (OSCE) կողմից, որին մասնակցում են Վրաստանի, Ռուսաստանի և դե-ֆակտո Օսեթիայի իշխանությունների ներկայացուցիչներ: Ամիսը երկու անգամ կազմակերպվող հանդիպումները կողմերին հնարավորություն են տալիս անձամբ հանդիպել՝ տեղեկատվություն փոխանակելու և Հարավային Օսեթիայի վարչական սահմանի երկայնքով ապրող բնակչության վրա ազդող կոնկրետ միջադեպերը քննարկելու և լուծելու համար: Այս հարցերը կարող են ներառել «բորդերիզացիայի» օբյեկտների տեղադրման, ազատ տեղաշարժի և կալանավորման դեպքերը: Նշված հանդիպումների արդյունքում առաջացան գործնական ձեռքբերումներ՝ գյուղատնտեսական նպատակներով վարչական բաժանող գիծը հատած կալանավորվածների ազատ արձակում և տեղի գյուղացիների համար կարևոր այլ հարցեր: Նշված մոտեցումներն օգտակար հանդիսացան վստահության և համագործակցության ձևավորման համար:

Եվրամիության դիտորդական առաքելությունը մասնակցում է նաև Գալիի միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի նիստերին, որը նախագահում է ՄԱԿ-ը և միավորում է Վրաստանի, Ռուսաստանի և դե-ֆակտո Աբխազիայի կառավարության ներկայացուցիչներին: Նրանց նպատակն է թուլացնել լարվածությունը և լուծել Աբխազիայի վարչական սահմանի երկայնքով առկա խնդիրները: Հանդիպումները ներկայումս դադարեցված են, բայց կարող են շուտով վերսկսվել:

Առաքելության թեժ գիծը

Եվրամիության դիտորդական առաքելության թեժ գիծը միացված է նաև Միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի հանդիպումներին: Սա հեռախոսով լարվածությունը թուլացնելու միջոց է՝ այն կողմերին թույլ է տալիս օրը 24 ժամ, շաբաթը յոթ օր տեղեկատվություն փոխանակել ցանկացած միջադեպի վերաբերյալ, որն անհապաղ ուշադրության կարիք է զգում: Եվրամիության դիտորդական առաքելության թեժ գիծ ունենալը բոլոր կողմերի միջև հաղորդակցության կենտրոնական մասն է՝ թեժ գիծը ստանում է բոլոր զանգերը, այնուհետև հաղորդագրություններով կիսվում է դրա մասին բոլոր կողմերի հետ: Թեժ գծում քննարկվող խնդիրներն ընդգրկում են հարցերի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ վստահության ամրապնդումը, կալանավայրերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը, ոռոգման խնդիրները, բժշկական կարիքների համար տեղաշարժը և այլն: Թեժ գիծը բավականին օգտակար է եղել մասնակիցների միջև ընդհանուր փոխըմբռնման ձևավորման համար այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են միջադեպերին արձագանքելը և լարվածության թուլացումը: Թեժ գիծը գործում է տարեկան մոտ 2500 անգամ:



Ժնևի միջազգային բանակցությունները

Ժնևի միջազգային բանակցությունները (GID) սկսվել են Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2008 թվականի հոկտեմբերին: Քննարկումներն անցկացվում են տարին չորս անգամ և այն համանախագահում են Եվրամիությունը (ԵՄ) և Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (OSCE) և ՄԱԿ-ը (UN), իսկ մասնակցում են հակամարտության կողմերը և Ամերիկայի Միացյալ Նահանգները:



Եվրամիության դիտորդական առաքելությունը Վրաստանում

Եթե միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմը հակամարտությունից տուժած բնակչության համար տեղում գործնական խնդիրների լուծման միջոց է, ապա Ժնևի միջազգային բանակցությունները միջազգայնորեն ճանաչված միակ քաղաքական ձևաչափն են, որտեղ քննարկվում են Վրաստանում հակամարտությունը լուծելու ուղիները: Եվրամիության դիտորդական առաքելության դերը Ժնևում տեղի ունեցող միջազգային քննարկումներում համանախագահներին պարբերաբար տեղյակ պահելն է տեղում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև քննարկումների յուրաքանչյուր փուլից առաջ կողմերին տեղեկացնել անվտանգության վերջին տեղեկատվության մասին:



Տեղեկացնել Եվրամիության քաղաքականության մասին

Եվրամիության դիտորդական առաքելությունը ստեղծվել է որպես Եվրամիության կառույցների և անդամ երկրների, ինչպես նաև ավելի լայն միջազգային հանրության համար վստահելի տեղեկատվության հիմնական աղբյուր, որը հետաքրքրված է Վրաստանի անվտանգության իրավիճակով: Անհրաժեշտության դեպքում տեղեկատվությունը տրամադրվում է համապատասխան տեղական, ազգային և միջազգային մարմիններին, որոնք պատասխանատու են համապատասխան օգնություն ցուցաբերելու համար: Վերջապես, մեր զեկույցները թույլ են տալիս Եվրամիությանը և նրա անդամ երկրներին ավելի լավ քաղաքականություն մշակել Վրաստանի և ամբողջ տարածաշրջանի նկատմամբ: Մենք միշտ կիրառում ենք «գործունեության անաչառության» սկզբունքը՝ հաշվետվությունը պետք է լինի փաստերի վրա հիմնված և օբյեկտիվ:

5. ձեռքբերումներ և մարտահրավերներ

Առաքելությունը մշտապես դիտարկում և զեկուցում է և պատրաստ է արագ արձագանքել խմբի գորշուղման և հաղորդակցության միջոցով, ինչը կարևոր դեր է խաղում վարչական սահմանի երկայնքով անվտանգության իրավիճակի դինամիկայի մեջ: Թեև միջադեպերը հաճախակի են եղել հակամարտությունից անմիջապես հետո, իրավիճակը ներկայումս համեմատաբար կայուն է, միջադեպերի ցածր ռիսկով:

Այնուամենայնիվ, հարաբերական կայունություն է նկատվել հակամարտությունից առավել տուժած բնակչության՝ մասնավորապես վարչական սահմանի երկայնքով ապրող կանանց, տղամարդկանց և երեխաների համար աճող մարտահրավերների ֆոնին: Շարունակվող «բորդերիզացիայի» գործողությունները բացասաբար են անդրադառնում ազատ տեղաշարժի, սոցիալական կապեր պահպանելու, սեփականության իրավունքը պաշտպանելու, արժանապատիվ եկամուտ ունենալու կարողության վրա և երեխաների մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքների վրա:

Մեր մանդատի շրջանակներում հիմնական խնդիրը մնում է Աբխազիայի և Օսեթիայի անջատողական շրջաններում դիտորդական առաքելություն իրականացնելու մեր սահմանափակ հնարավորությունը: Ի սկզբանե մեզ մերժեցին Վրաստանի ողջ տարածքը ընդգրկելու հնարավորությունը, չնայած այն հանգամանքին, որ մեր մանդատն ընդգրկում է Վրաստանի ողջ տարածքը: Ամբողջ տարածքի հասանելիությունը կբարձրացներ թափանցիկությունը, պարզություն կհաղորդեր արդեն տեղի ունեցած միջադեպերի շուրջ և կնվազեցներ ապագա ապակայունացնող միջադեպերի ռիսկը:

Մենք հուսով ենք, որ մի օր կգտնվի հակամարտության երկարատև լուծում, և այլևս կարիք չի լինի տեղում ունենալ այնպիսի առաքելություն, ինչպիսին մերն է: Մինչ այդ առաքելությունը կշարունակի օր ու գիշեր պարեկել՝ նպաստելով տարածաշրջանում կայունության ամրապնդմանը:

www.eumm.eu
 @eummgeorgia